ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԻ ՎՐԱ)

Ղազարյան Գ. Հ., Բաբայան Լ.Ա. (ԵՊԲՀ , Երևան, Հայաստան)
ghazaryan.psy@gmail.com,lilitbababyan.2011@mail.ru
Արիստակեսյան Դ. Ա. («Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարան,Գալաց,Ռումինիա)
davidaristakesyan@gmail.com
Ներկայացման ամս.՝ 26.07.2019
գրախոսման ամս.՝ 03.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածում ներկայացված են տարբեր երկրների առաջին կուրսի ուսանողների հարմարվողականության սոցիալ-մշակութային և հոգեբանական առանձնահատկությունները և օրինաչափությունները՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում, հատկապես այն ուսանողների, որոնք բարձրագույն կրթությունը ձեռք են բերում իրենց հայրենիքի սահմաններից դուրս: Մեր առջև դրված նպատակի իրականացման համար, հետազոտվել են Երևանի Մ. Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի առաջին կուրսի ուսանողների 3 խումբ՝ հայալեզու, ռուսալեզու և անգլալեզու, իսկ Ռումինիայի Հանրապետության Գալաց քաղաքի «Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարանում հետազոտությունն իրականացվել է հայ, ռումինացի, ալբանացի և արաբ ուսանողներից կազմված խմբերում: Բազմակողմանի հետազոտությունների հիման վրա եկել ենք այն եզրահանգման, որ տարբեր երկրներում սովորող առաջին կուրսի ուսանողների հարմարվողականության գործընթացը մեծապես պայմանավորված է ուսանողի և դասախոսի, համակուրսեցիների փոխհարաբերություններով ինչպես նաև տվյալ երկրի սոցիալ-մշակութային պայմաններով: Ուսանողի և դասախոսի, ինչպես նաև համակուրսեցիների միջև արդյունավետ հարաբերությունների ձևավորման հիմնական սկզբունքներն են. շփվողականություն, երկխոսություն, ակտիվ ընկալում, ինքնաբացահայտում, արժեքա-իմաստային կողմնորոշման ձևավորում, պատասխանատվության զարգացում:

Հանգուցային բառեր՝ *հարմարվողականություն, միջանձնային շփում, ԲՈՒՀ, սոցիալ-մշակութային առանձնահատկություններ :*

Այսօր մասնագիտության ընտրության և աշխատանքային գործունեության համար լուրջ խնդիր է այն, որ տեսաբանության, մեթոդաբանության և տեխնոլոգիական առաջընթացների անհամաձայնության բախման կետը դառնում է

ուսանողի, մասնագետի անձը, նրա անհատականությունը, ստեղծագործելու, արարելու ունակությունը: Այս հակասությունում անձի համար ելակետային առանցք են դառնում մասնագիտական ինքնիրացման, կրթական նոր միջավայրում սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մշակութային հարմարման և հետագա կայացման խնդիրները, որոնք ուղեկցվում են անձի ինքնուրույնությամբ, ակտիվությամբ, հաջողության և նվաճումների ձգտման դրդապատճառներով [1,էջ 6-8]: Այս առումով այսօր հատկապես կարևոր է ուսումնասիրել հուզական ապրումների զարգացման, ինչպես նաև փոփոխված սոցիալական պայմաններում միջավայրին հարմարման հոգեբանական մեխանիզմները:

Մեր հետազոտման նպատակն է ուսումնասիրել տարբեր երկրների առաջին կուրսի ուսանողների սոցիալ-մշակութային, ինչպես նաև հոգեբանական հարմարվողականության առանձնահատկությունները բարձրագույն ուսումնական հաստատություններին: Մեր հետազոտման վարկածն այն է, որ տարբեր երկրների (մասնավորապես Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի Հանրապետության) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացի նկատմամբ ՝ առաջին կուրսի ուսանողի սոցիալ հոգեբանական, սոցիալ-մշակութային հարմարվողականության գործընթացը պայմանավորված է մի շարք կարևորագույն գործոններով՝ սոցիալական, մշակութային, լեզվական անջրպետների հաղթահարման, ուսանողի անձնային առանձնահատկություններով, տեղեկացվածության մակարդակից, ուսանողի հաղորդակցման, շփվողականության աստիճանից, ինքնավերահսկողությունից, ինքնավստահությունից:

Հետազոտական խումբը կազմված է առաջին կուրսի 120 ուսանողներից, որից 60 ուսանողների հետ ուսումնասիրությունը անցկացրել ենք ՀՀ-ում Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, իսկ մյուս 60 ուսանողների հետ Ռումինիայի Հանրապետության Գալաց քաղաքի «Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարանում: Կազմվել են 3 և 4 տարբեր խմբեր՝ յուրաքանչյուրում 15-ից 20-ական առաջին կուրսի ուսանողներ: ԵՊԲՀ -ում կազմված 1-ին խմբում ներառված են հայերեն ուսուցմամբ 20 տեղացի ուսանողներ, 2-րդ խմբում ներառված են ռուսերեն ուսուցմամբ 20 օտարերկրացի ուսանողներ, 3-րդ խմբում ներառված են անգլերեն ուսուցմամբ 20 օտարերկրացի ուսանողներ: «Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարանում կազմված 1-ին խմբում ներառված են 15 հայ, 15 ալբանացի, 15 ռումինացի և 15 արաբ՝ ռումիներեն լեզվով ուսուցանվող ուսանողներ: Հետազոտվող ուսանողների տարիքը 17-22 տարեկանն է: Հետազոտման ընթացքում կիրառել ենք Կետտելի անձնային հարցարանը (բացահայտում է բնավորության 16 գործոններ), Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկան և առաջին կուրսի ուսանողի հարցարանը [4] : Խմբերի միջև եղած տարբերությունը գնահատվել է ըստ Z թեստի 95% հավաստիության սահմաններում: Ըստ Կետտելի 16 - բազմագործոն անձնային հարցարանի՝ հետազոտության ընթացքում ստացել ենք հետևյալ ցուցանիշները ԵՊԲՀ -ում կազմված խմբերում այն, որ 1 - ին կուրսի և տեղացի և օտարերկրացի

ուսանողների մոտ ցածր ինքնագնահատական չի նկատվել, հետազոտվողների 70% ունեն ադեկվատ ինքնագնահատական: Հարմարվողականության ձևավորմանը կարելի է ասել, նպաստել է բարձր ինքնահսկողությունը, կարողանում են հեշտությամբ վերահսկել սեփական հույզերը և վարքը: Հարմարվողականությանը նպաստում է նաև ինքնավստահության միջին մակարդակը, ընդ որում հայալեզուների մոտ կազմել է 15%, ռուսալեզուների՝ 65 %,անգլալեզուների ՝55 %, վերլուծությունը ցույց տվեց, որ վիճակագրորեն հավաստի է տարբերությունը հատկապես հայալեզու և ռուսալեզու, հայալեզու և անգլալեզու խմբերում՝ P < 0,05-ից: Սակայն տեղացի ուսանողների մոտ բարձր է տագնապայնությունը, որը կարելի է կապել տեղեկատվության պակասի հետ, իսկ օտարերկրացի ուսանողները լավ տեղեկացվում են: Հարմարվողականությանը նպաստում է նաև շփվողականության միջին մակարդակը, որն ավելի բարձր է օտարերկրացի ուսանողների մոտ, քանի որ առաջին անգամ են հայտնվում տվյալ երկրի համալսարանական միջավայր, փորձում են առավել շատ շփվել, ծանոթանալ, թե համալսարանական կյանքին, և թե ուսանելու ժամանակահատվածում բնակության պայմաններին, ինչպես նաև տվյալ երկրի սովորույթներին [5,էջ 28-32]: «Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարանում կազմված 1-ին խմբում հետազոտության ընթացքում ստացել ենք 50% բարձր ինքնագնահատական՝ հայ և արաբ ուսանողների մոտ, իսկ ռումինացի և ալբանացի ուսանողների շրջանում բարձր ինքնագնահատականը կազմել է մոտ 85 %: Նկատելի է եղել այն, որ այս խմբերում հարմարվողականությանը նպաստել է ինքնավերահսկողությունը: Այստեղ բացի ռումինացի ուսանողներից, մյուս երեք խմբերում նկատելի է եղել տագնապայնության բարձր աստիճան: Այս խմբերում հարմարվողականությանը մեծապես նպաստել է շփվողականության բարձր մակարդակը, ինչն նկատելի էր նաև ԵՊԲՀ-ում հետազոտվող խմբերում:

Ըստ մեր հաջորդ մեթոդիկայի՝ Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկայի արդյունքների կարող ենք ասել (տես. Աղյուսակ 1), որ ԵՊԲՀ-ում 1-ին կուրսի և՛ տեղացի և՛ օտարերկրացի ուսանողների մոտ հարմարվողականության ցածր մակարդակ չենք ստացել, միջին հաշվով հարմարվողականության ցուցանիշը կազմում է հետազոտվողների 75%-ը: Ըստ հարմարվածության ցուցանիշի՝ հայալեզու և ռուսալեզու /60; 81%/, ռուսալեզու և անգլալեզու /81; 57%/ խմբերում առկա է վիճակագրորեն տարբերություն ՝ P < 0,05-ից: Համակրանք սեփական ես-ի նկատմամբ ցուցանիշը հայալեզու և անգլալեզու խմբերի միջև վիճակագրորեն հավաստի չէ տարբերությունը P > 0,05-ից ,իսկ ռուսալեզու և անգլալեզու խմբերում վիճակագրորեն տարբերությունը առկա է P < 0,05-ից: Համակրանք այլ մարդկանց նկատմամբ, հուզական բարեհարմարություն, ինտերնալություն և գերակայության ձգտում ցուցանիշների վերլուծությանը համապատասխան խմբերի միջև վիճակագրորեն հավաստի տարբերություն չկա P > 0,05-ից: Հարմարվողականությանը նպաստում է նաև իրազեկության միջին մակարդակը, որը նկատվում է և տեղացի ուսանողների, և օտարերկրացի ուսանողների մոտ, սակայն տեղացի ուսանողների մոտ տվյալ ցուցանիշը լիովին

գտնվում է նորմայի սահմաններում: Չնայած այն հանգամանքին, որ օտարերկրացի ուսանողների իրազեկության ցուցանիշը որոշակիորեն ցածր է, այնուամենայնիվ միջին հաշվով այն ևս նպաստում է արագ հարմարվողականությանն ուսումնական գործընթացին:

Աղյուսակ 1.

ԵՊԲՀ-ում հետազոտվող խմբերում Կ.Ռոջերսի և Ռ.Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիա մեթոդիկայի արդյունքները



Ըստ այս մեթոդիկայի կարող ենք ասել (տես. Աղյուսակ 2), որ «Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարանում հետազոտվող խմբերում ուսանողների մոտ հարմարվողականությունը գերազանցում է միջին մակարդակը, որին բացառապես նպաստել է համակրանք սեփական Ես-ի նկատմամբ բարձր, ինչպես նաև համակրանք այլ մարդկանց նկատմամբ ևս բարձր ցուցանիշները Ըստ հարմարվածության ցուցանիշի հայ և ռումինացի /45; 87%/, արաբ և ռումինացի / 47. 5; 87%/, հետազոտվող խմբերի մոտ վերլուծության արդյունքում առկա է վիճակագրորեն հավաստի տարբերություն P < 0,05-ից, իսկ ռումինացի և ալբանացի /87; 75%/ խմբերի միջև՝ համապատասխան այս ցուցանիշի վիճակագրորեն հավաստի տարբերություն առկա չէ P > 0,05-ից: Համակրանք սեփական ես-ի նկատմամբ, համակրանք այլ մարդկանց նկատմամբ, հուզական բարեհարմարություն, ինտերնալություն, գերակայության ձգտում ցուցանիշներով խմբերի միջև վիճակագրորեն տարբերությունը նկատելի չէ՝ P > 0,05-ից:

Աղյուսակ 2.

«Դունարեա Դե Ջոս» բժշկական համալսարանում հետազոտվող խմբերում Կ.Ռոջերսի և Ռ.Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիա մեթոդիկայի արդյունքները



Առաջին կուրսի ուսանողի հարցարանում տեղ գտած բազմաթիվ հարցերից, ելակետային ենք վերցրել բոլոր խմբերում ուսանողների բնակության պայմանները /ուսման տարիների ընթացքում/, առաջադիմությունը միջնակարգ կրթության ժամանակահատվածում և բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ ինչպես 1-ին ուստարվա սկզբին, այնպես էլ 1-ին ուստարվա ընթացքում և վերջում [3]: Վերլուծել ենք նաև սոցիոմետրիկ ստատուսը խմբում, ինքնաէֆֆեկտիվությունը ուսումնական գործընթացում, բավարարվածությունը միջխմբային հարաբերություններում, անհանգստությունը՝ պայմանավորված հասակակիցների հետ հարաբերակցվելու խնդիրների և վախերի նկատմամբ, անհանգստությունը պայմանավորված դասախոսների հետ հարաբերակցվելու խնդիրների և վախերի նկատմամբ, ինչպես նաև մասնագիտության ընտրության դրդապատճառները, բավարարվածությունը և պատկերացումները տվյալ մասնագիտության վերաբերյալ [2, էջ 173-177]:

Բազմակողմանի հետազոտությունների հիման վրա կարող ենք տալ հետևյալ եզրահանգումները, որ տարբեր երկրներում սովորող առաջին կուրսի ուսանողների հարմարվողականության գործընթացը մեծապես պայմանավորված է ուսանողի և դասախոսի, համակուրսեցիների փոխհարաբերություններից, որն նկատելի է վերլուծված ցուցանիշներից, հատկապես համակրանք սեփական ես-ի նկատմամբ, համակրանք այլ մարդկանց նկատմամբ ինչպես նաև տվյալ երկրի սոցիալ-մշակութային պայմաններից: Այդ հարաբերությունները զարգացնում են ուսանողի

այնպիսի ունակությունները, որոնք թույլ են տալիս կառավարել իրենց գործունեությունը, նպաստում են ինքնադրսևորման, անձնային և մասնագիտական աճին: Ուսանողի և դասախոսի, ինչպես նաև համակուրսեցիների միջև արդյունավետ հարաբերությունների ձևավորման հիմնական սկզբունքներն են. շփվողականություն, երկխոսություն, ակտիվ ընկալում, ինքնաբացահայտում, իրազեկվածություն, արժեքա-իմաստային կողմնորոշման ձևավորում, պատասխանատվության զարգացում:

Գրականություն

1 **Ասատրյան Լ.Թ. և ուրիշ**. Կրթության համակարգի կառավարման հիմունքները (մեթոդաբանություն և տեխնոլոգիա): Բուհական ձեռնարկ.- Եր.: Զանգակ-97. էջ 6-8.

2 **Архипова А.А.** Адаптация студентов как одно из условий самореализации личности// Педагогические науки. - 2007. - № 3. - С. 173-177.

3 **Попова Т.И**. Психологические проблемы адаптации студентов к условиям вуза//Вестник Санкт-Петербургского университета. Серия 6: Философия, политология, социология, психология, право, международные отношения. - 2007. - № 2-222.

4 **Райгородский Д.Я.** Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие. – Самара, 2006.

5 **Stipek D.** “Motivation to Learn. From Theory to Practice”. University of California, Los Angeles, 1993 p.28-32.

ЗАКОНОМЕРНОСТИ СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОЙ И ПСИХОЛОГИЧЕСКОЙ АДАПТАЦИЯ СТУДЕНТОВ РАЗНЫХ СТРАН (НА ПРИМЕРЕ РУМЫНИИ И АРМЕНИИ)

Казарян Г.А., Бабаян Л.А. (ЕГМУ, К.Ереван, Армения)

Аристакесян Д.А. (Медицинский университет им. Дунаре де Джоса, Галац, Румыния)

В данной статье рассматриваются особенности и закономерности социокультурной и психологической адаптации первокурсников к учебе в ВУЗ, в особенности студентов, которые получают высшее образование за пределами своей страны. В связи с этим три группы первокурсников ЕГМУ были обследованы на армянском, русском и англоговорящем студентах, а также было проведено исследование в румынском университете «Dunarea de Jos» на армянском, румынском, албанском и арабском языках. говорящие студенты. Для достижения этой цели были исследованы стеденты первого курса двух ВУЗов: три группы студентов Ереванского государственного медицинского университета им. М.Гераци (армяноязычные, русскоязычные и англоязычные) и студенты в медицинского

центра в г. Галаце Дунаре-де-Джос Румыния (группы студентов из армян, румынов, албанцев и арабов).

Основываясь на многолетних исследованиях, мы пришли к выводу, что процесс адаптации первокурсников, обучающихся в разных странах, во многом обусловлен отношениями между студентом и преподавателем, сокурсниками и социально-культурными условиями данной страны. Основные принципы эффек тивных отношений между студентом и преподавателем, а также сокурсниками, это: общение, диалог, активное восприятие, самораскрытие, формирование ценностно-ориентированной ориентации, развитие ответственности.

Ключевые слова: *адаптация, социо-культурные особенности, межличностное общение, высшие учебные заведения.*

REGULARITIES OF SOCIAL-CULTURAL AND PSYCHOLOGICAL ADAPTATION OF STUDENTS FROM DIFFERENT COUNTRIES (ON THE EXAMPLE OF ROMANIA AND ARMENIA)

Ghazaryan G.H., Babayan L.A. (YSMU,Yerevan, Armenia) Aristakesyan D.A. (University "Dunarea de Jos", Galati, Romania)

This article discusses the features and patterns of socio-cultural and psychological adaptation of freshmen to study at University, especially students who receive higher education outside their country. In this regard, three groups of YSMU freshmen were examined in Armenian, Russian and English-speaking students, as well as in the Romanian University "Dunarea de Jos" a study was conducted by students speaking Armenian, Romanian, Albanian and Arabic. To achieve this goal, first-year students of two universities were investigated - three groups of students of Yerevan State Medical University named after M. Heratsi (Armenian-speaking, Russian-speaking and English-speaking) and students of the medical center in Dunarea de Jos, Galati city, Romania (groups of students from Armenians, Romanians, Albanians and Arabs). Based on many years of research, we have concluded that the process of adaptation of first-year students studying in different countries is largely due to the relationship between the student and the teacher, fellow students and socio-cultural conditions of the country. The main principles of effective relations between students and teachers, as well as fellow students, are communication, dialogue, active perception, self-disclosure, the formation of value-oriented orientation, the development of responsibility.

Keywords: *adaptation, sociocultural features, interpersonal communication, tertiary education institutions.*